

ՄԻԶՈՒԿԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻԱՑՅԱԼ ԻՆՍՏԻՏՈՒՏ

/ընդհանուր նկարագիր/

[Միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտը](#) (ՄՀՄԻ) ստեղծվել է 1956թ. մարտի 26-ին 11 հիմնադիր երկրների կառավարությունների ներկայացուցիչների կողմից Մոսկվայում ստորագրված Համաձայնագրի հիման վրա՝ նպատակ ունենալով համախմբել իրենց գիտական և նյութական ներուժը՝ նյութի հիմնարար հատկությունները հետազոտելու համար: 1957 թ. փետրվարի 1-ին ՄՀՄԻ-ն գրանցվեց ՄԱԿ-ի կողմից: Ինստիտուտը գտնվում է ՌԴ-ում, Մոսկվայից 120 կմ հեռավորության վրա՝ Դուբնա քաղաքում:

Այսօր Միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտը համաշխարհային ճանաչում ունեցող գիտական կենտրոն է, որում հիմնարար հետազոտությունները (տեսական և փորձարարական) հաջողությամբ համադրվում են նորագույն տեխնոլոգիաների մշակման, ներդրման և համալսարանական կրթության հետ: Համաշխարհային գիտական հասարակության մեջ ՄՀՄԻ-ի վարկանիշը շատ բարձր է:

ՄՀՄԻ-ին անդամ է 18 երկիր: Պետական մակարդակով ինստիտուտը համաձայնագրեր է կնքել Հունգարիայի, Գերմանիայի, Իտալիայի, Սերբիայի և Հարավ-Աֆրիկյան հանրապետությունների հետ:

ՄՀՄԻ-ին միջազգային մասշտաբի ինստիտուտի կարգավիճակ ունի: Նրա բարձրագույն ղեկավար մարմինը բոլոր 18 անդամ-երկրների կառավարությունների լիազոր ներկայացուցիչներից կազմված կոմիտեն է: Ինստիտուտի գիտական քաղաքականությունը մշակում է գիտական խորհուրդը, որի կազմում, անդամ-երկրների հայտնի գիտնականներից բացի, ընդգրկված են նաև հայտնի ֆիզիկոսներ Գերմանիայից, Իտալիայից, ԱՄՆ-ից, Ֆրանսիայից, Միջուկային հետազոտությունների եվրոպական կազմակերպությունից (ՄՀԵԿ):

ՄՀՄԻ-ի տեսական և փորձարարական հետազոտությունների հիմնական ուղղություններն են տարրական մասնիկների ֆիզիկան, միջուկային ֆիզիկան և խտացված միջավայրների ֆիզիկան: ՄՀՄԻ-ի գիտական ծրագիրն ուղղված է գիտության մեջ սկզբունքային նշանակություն ունեցող բարձրարժեք արդյունքների ձեռքբերմանը:

ՄՀՄԻ-ի կազմում գործում է ութ լաբորատորիա, որոնցից յուրաքանչյուրն իր իրականացրած հետազոտությունների ծավալով համարժեք է մի մեծ ինստիտուտի: Ինստիտուտում աշխատում է շուրջ 6000 մարդ, այդ թվում՝ ավելի քան 1000 գիտական աշխատող (որոնց թվում՝ գիտությունների ազգային ակադեմիաների իսկական եւ թղթակից անդամներ, գիտության ավելի քան 260 դոկտոր եւ 630 թեկնածու): Շուրջ 2000 մարդ ընդգրկված է ինժեներատեխնիկական անձնակազմում:

Ինստիտուտը կապեր ունի աշխարհի 60 երկրների մոտ 700 գիտական կենտրոնի եւ համալսարանի հետ: Միայն Ռուսաստանում, որը ՄՀՄԻ-ում գլխավոր ներդրողն է, համագործակցություն է իրականացվում 60 քաղաքի 150 հետազոտական կենտրոնների, համալսարանների, արտադրական ձեռնարկությունների եւ ֆիրմաների հետ:

Ինստիտուտի գիտական ծրագրի իրականացմանը մասնակցում են ԱՊՀ 10 երկրների ավելի քան 200 գիտական կենտրոն, համալսարան եւ ձեռնարկություն:

ՄՀՄԻ-ն փոխշահավետորեն կապեր է պահպանում ՄԱԳԱՏԵ-ի, ՅՈՒՆԵՍԿՕ-ի Եվրոպական ֆիզիկոսների հանրության՝ Տրիեստի տեսական ֆիզիկայի միջազգային կենտրոնի հետ: Ամեն տարի ՄՀՄԻ-ի հետ համագործակցող կազմակերպություններից Դուբնա է այցելում ավելի քան 1000 գիտնական: Զարգացող երկրների ֆիզիկոսներին ՄՀՄԻ-ն տրամադրում է կրթաթոշակներ:

Միացյալ ինստիտուտի գիտնականները մշտապես մասնակցում են միջազգային ու ազգային գիտական կոնֆերանսների: Իր հերթին ինստիտուտը տարեկան կազմակերպում է մոտ 10 խոշոր կոնֆերանս, ավելի քան 30 միջազգային խորհրդակցություն, ինչպես նաեւ, արդեն ավանդական դարձած, երիտասարդ գիտնականների դպրոցներ:

ՄՀՄ ինստիտուտի կրթական ծրագրի ընդհանուր համակարգումն ու օժանդակությունն իրականացնում է ինստիտուտի հատուկ ստորաբաժանումը՝ կրթագիտական կենտրոնը:

ՄՀՄԻ-ն է պատկանում նախկին ԽՍՀՄ-ում գրանցված միջուկային ֆիզիկայի բնագավառում կատարված հայտնագործությունների կեսը (շուրջ 40): Ժամանակակից ֆիզիկայի եւ քիմիայի բնագավառում ունեցած մեծ ներդրման համար որպես երախտագիտության նշան կարելի է գնահատել ընդհանուր եւ կիրառական

քիմիայի միջազգային միության որոշումը՝ Մենդելևեի պարբերական աղյուսակի
105-րդ տարրը «Դուբնիում» անվանելու վերաբերյալ: